թեան կամ սկզբունքի, հարկ էր 'ի սկզբանէ անտի մինչև ցայսօր առանց բացառութեան մեր կրօնի պաշտօնեայներն լինէին տգէտ և գիտութեան ատելող մարդիկ. սակայն ներկային և անցելոց պատմութիւնը չեն արդարացուներ այդպիսի դատաստան: Պատմութիւնը ցոյց կուտայ մեզ Եկեղեցական վերին իշխանութեան դասակարգին մէջ նշանաւոր Կաթողիկոսներ, որ վերաբերութեամբ իրենց ժամանակին արժանի եղեր են իմաստուն համարուիլ. նոյնպէս ապացոյցներ ունիմք հաստատելու թէ ամէն ժամանակ մեր ազգին մէջ գիտութիւնք առաւելապէս մշակուեր և ծաղիկ են Եկեղեցականաց ձեռօք: Տպագրութիւնը՝ որ գիտութեանց և արուեստից ծաւալելուն հզօրագոյն միջոցն և առիթն եղաւ, առաջին անգամ մեր Ազգին մէջ Եկեղեցականաց ձեռօք մուտ գտաւ և ծաղկեցաւ:

Մինչև հիմայ ըսուածներէն կ'հետևի ուրեմն՝ որ այս յուրա զգաստութեան փաստաբաններն՝ եթէ սատանիկ միտումներ թաքուած չեն, խարէութեամբ կ'ջանան հասնել իրենց ծածկեալ նպատակին, և ասոր համար առանց ընդհանուր ազգին մտաւորական զարգացման վիճակը հաւաքապէս նկատելու, մի միայն եկեղեցականութեան վերայ կ'ամբաստանեն իրենց տեսութիւնը, որպէս թէ նա առանձին և որոշ մարմին մը լինելով ամենևին անկցորդ աշխարհական — ընկերական մարմնոյն. և այս ծուռ տեսութիւնն շառաւիղն նկատելով այն մեծ և վնասակար սխալման դուրը կ'զլխին, մատնաւորելով եկեղեցականութեան վերայինչ որ ընդհանուր ազգային ընկերական մարմնոյն վրայ պէտք էր ասել: Բ. սա այսմ փոխանակ կրօնն և կրօնականութիւնը զբսպարանելու իրրև թշնամի գիտութեանց, Ալան և հայութիւնը հարկ էր ամբաստանել միևնոյն յանցանքով, որ է անտեղութիւն անտեղութեանց:

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Վանահայր Աբմաղ— վանաց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍԵԱԼ ԶԱՒԱԿՆԵՐ ՊԻՏՔ ԵՆ.

Ե.

Ամէն լուսաւոր գաղափար ունեցող ազգային՝ նկատելով Եւրոպացւոց օրէցօր թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս զարգացումը և Հայաստանի այժմեան տարտամ և անտարբեր վիճակը՝ հետևեալ կերպով կը խօսին իրարու. «Ի՛նչպէս, Հայաստանի լուսաւորութեան համար՝ ուսեալ զաւակներ պէտք են, ուրեմն (հետևցնում են) նախ՝ Եկեղեցւոյ ընտիր և գործունեայ ժառանգաւոր հասցնելու համար՝ ամէնեւիթական կարողութիւն ունեցող վանքերի մէջը հաստատուին կղերանոց կամ ընծայարան, Տպարան, և ընթերցարան. այս օրինակը ահա գործնական ապէս ցոյց տուին մեր Վեհափառ Հայրապետ Գէորգ Գ. Արբաղնագոյն Կաթողիկոսն, և սուրբ Երուսաղէմայ Արժանընտիր Պատրիարք Հայոց Արբաղան Աբքեպիսկոպոսն. որոնք ընդհանուր Ազգի յոյսը պատկելու, և մեր նախնի մեծագործ սուրբ հարց զբաղելի գործոց նորոգիչ համարուելու արժանաւորութիւնն ունեցան. երանի՜ թէ միւս երևելի վանքերն* էլ նոցա ազ-

*) Այն այս յօդուածը գրող Արժ. Բահանայն ինչպէս կերևի, տեղեկութիւն չունի Նիկոմիդիոյ մերձ Ձրմաշու Զարխարեան Ս. Աստուածածնի վանուց վերայ. որ իրր քառասուն տարիներէ ի վեր ունի Ժ—ան—դ—ր—ց Ո—ն—ն—ա—ն, որ քան բաւակա-

նիւ օրինակին հետևելու պատիւն ունենայ (թէ և նրանցից ոմանք սկսեցին՝ բայց հաղիւ թէ հնարաւոր դրմնեու չափ կեանք ունեցան). տարակոյս չկայ որ այնպիսի վանքերից դուրս գան 'ի ժամանակին՝ ուսեալ բարեկիրթ և գործունեայ Եկեղեցական հովիւներ, 'և դպրոցական Ուսուցիչներ, զի Հայաստանի այժմեան «Հունձք բազում են, և մշակք սակաւ»։

Բ.

Բայց ժողովուրդ (ասում են) ուսումնասիրութեան և բարոյականութեան վարժեցնելու համար՝ հաստատուին ամէն քաղաքների մէջը հասարակաց ընթերցարաններ և թատերական հանդիսարաններ. ընթերցարանների մէջ գտնուին զանազան տեսակ ազգային հին և նոր գրքեր, պարբերական թերթեր և ամէն տեսակ լրագրեր. ուր անխտիր կերպով ամէն մարդ արտօնութիւն ունենայ պարապոյ ժամերը այնպիսի հաստատութեանց մէջ անցկացնել. իսկ թատերական բեմերի վրայ կը տեսնայ ժողովուրդ կրթական զուարճալի ներկայացումներ, և կը լսէ գործնական քարոզներ, որոնցից բաւական օգուտներ կը քաղէ. զի բարոյականութեան մէջ կը կրթուի և ազգասիրական ոգով կը վառուի. և այս միջոցներով Ազգը կը յառաջադիմէ դէպ 'ի լուսաւորութիւն ինչպէս որ Եւրոպացիք ընթերցասիրութեամբ ստացած են։

Գ.

Հափահաս տղայոց համար էլ (ասում են) հարկաւոր են գիշերօթիկ և կիսաբակնօրեայ դպրոցներ, որոնք հեռացած իրանց ծնողաց փաղաքշանքից և վատ դայթակղեցուցիչ օրինակներից՝ ամէն ուսմանց առարկաների վրայ ուշադրութիւն դարձնելով՝ կարող են սուղ ժամանակի մէջ սովորիլ, և բարոյականութեան մէջ կատարելապէս կրթուիլ. նմանապէս և կիսաբակի դպրոցներում՝ կարող են յաճախել կիսակի օրեր՝ արհեստի գնացող չափահաս պատանիներ, փոխանակ անօգուտ խաղերի հետ պարապելու՝ դնան այնպիսի դպրոցները, իրանց թերի թողած ուսմունքը կատարելագործելու. իսկ հասարակ ուսումնարանաց և դպրոցաց համար էլ՝ (ասում են) արդէն բացուածները բարեկարգել նոր լուսաւոր մեթոդներով, և չնչաց տեղերում էլ՝ բանալ արդիւնաւոր դպրոցներ, և կառավարել ազգային նպատակներով կամ աղբիւրներով։

Դ.

Ուրեմն մեայ մեղ հօսիլ Հայաստանի հիմնական լուսաւորութեան միջոցի վրայ, այսինքն՝ պատրաստել ազգային համար ուսեալ և բարեկիրթ սերունդ։ Այս պէտք է ուսեալ և բարեկիրթ մայրեր ունենալ՝ և հետևապէս պահանջել և ուսեալ սերունդ։ Ուրեմն Հայաստանի (այսինքն հայ գտնուած) ամէն քաղաքների և գիւղերի արա-

---

նին արդիւնաւոր հանդիսացած է, ըստորում նոյն վանուց այժմեան Գեր. Վանահայրը եւ Արժանապատիւ Միաբանութիւնը եւ Ուսումնարանի դաստատուր, նոյն իսկ ուսումնարանի աշակերտներէն են, որք ձեռք ձեռքի տուած, անմնանելի իրութեամբ կաշխատին ազգային համար հեղինեակ յուսաւէտ Եկեղեցականներ պատրաստել յօգուտ Ս. Եկեղեցւոյ մերոյ եւ Ազգի. Նա եւ երեք տարիէ հետէ, Յ-ոյ- անուամբ բանաստեղծ հանդէս կը հրատարակեն, ընտիր եւ պիտանի նիւթոց բովանդակութեամբ։ Ուստի արժան է, որ համայն մեր սիրելի Ազգայինք մեծ Հ-մ-ի-ր-Ն-ն եւ Օ-ն-դ-է-ր-Ն-ն ցոյց տան այն անմնանելէր եւ Արժանապատիւ Միաբանութեան, եւ ստանան եւ ընթերնուն նորա Յ-ոյ- հանդէսը. որով անշուշտ ինչպէս սիրելի Ազգայինք, նոյնպէս եւ այն Միաբանութիւնը ոչ սակաւ մխիթարութիւն եւ քաջալերութիւն պիտի զգան փոխադարձաբար։ Ծ. Խմբ.

կան սեռի դպրոցների հաւասար՝ հարկաւոր է ունենալ և իգական սեռի բարեկարգ դպրոցներ, որոց մէջը ամէն ուսմունքներից փոքրը 'ի շատէ ուսեալ Օրիորդները քանի տարիից յետոյ՝ պիտի նոր սերունդների նախադաստիարակ մայրեր լինին։

Ե.

Մի նոր լեզուն բացուած մանուկ, երբ սկսած է հասակով օրէ ցօր զարգանալ, նորա համար մարմնական սննդեան հետ՝ կարևոր է և հոգեկան սնունդ. նախ՝ կը ցանկայ իմանալիւր և աշխարհի արարածոց ստեղծող և կառավարողը, Եկեղեցին և նորա սուրբ խորհուրդները, Աբեղական, Լուսնի, Աստեղաց և երկնքի ինչութիւնը, անձրևի, ձիւնի, կարկտի, երկրաշարժի, ծիածանի, կայծակի, որոտումի, ամպերի և տարուան չորս եղանակաց պատճառները, աշխարհիս մէջը գտնուած ծովերի, լիճների և քաղաքների անունները, և նորա բնակչաց թիւը, կենդանեաց տեսակները և նոցա բնաւորութիւնները, ծառերի, ծաղիկների, և խոտերի նճիցումները, հանքային նիւթոց յատկութիւնները, լսել հարկաւոր օգտակար և զուարճալի պատմութիւններ, սովրիլ փոքր 'ի շատէ կարդալ և գրել, և մանր մունր թուահաշիւներ, վերջապէս մի նոր մտաւորական ախորժակ կ'ունենայ նոր բաներ խորհիլ խօսիլ, լսել և գործել՝ առանց չարը բարիից որոշելու։

Զ.

Ուրեմն այնպիսի դեռահասակ մանուկների դաղափարը լուսաւորելու համար՝ հարկաւոր է ունենալ ճշմարիտ ուղղափառ կրօնի սկզբունք, բնական և քաղաքական աշխարհագրութեան, բնագիտութեան գիտելեաց, թուաբանութեան հաշիւների և բարոյականութեան կանոնների փոքր 'ի շատ, սեղեակ և կրթուած մայրեր, որոնց խնամոց ներքարկուած փոքրիկ մանուկներ՝ արդէն նախակրթուած և ճշմարիտ դաստիարակութեամբ զարգացած՝ մի ժամանակից յետոյ՝ մանում են Ուսումնարան, այնուհետև սկսում են ինքնայօժար սիրով և շատ գիւրին կերպով, և մանաւանդ կարճ միջոցումը սովորիլ կարևոր ուսմունքներ, և լինել՝ այրենեաց համար օգտակար անդամ. զի այն կերպով կրթուած մանուկների համար ունակութիւն եղած է մարմնական սննդեան հետ և հոգեկան սնունդ։ Ահա այս միջոցն է, որ 'ի գործ դրած են թէ Եւրոպացիք և թէ Ամերիկացիք. որով և այժմ զարգացած են թէ նիւթական և թէ բարոյական յառաջադիմութիւններով։ Ուրեմն նոցա օրինակին հետևելու, և զարգացման ասպիճանին հասնելու՝ պատրաստենք ուսեալ մայրեր, որով և ունենանք ուսեալ սերունդներ՝ Հայաստանի լուսաւորութեան համար։

ՄԵՍՐՈՎՊ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆՑ։

Ի Պ. Ամ--լ--։

ՀԱՆԵԼՈՒԿՔ

1.

Այն որ կառքն է երկաթի,
Որ մի աշխարհ ինքեամբ ածի,
Ուր և կամի, շրջի, հանգչի,
Առանց անուի և հողովի։

2.

Այն որ տունկն է անհաստատ,
Արմատն ի վեր, ոստքն ի վայր,
Որ տայ պտուղ միշտ անընդհատ,
Մերթ քաղցրահամ, երբեմն էլ վատ։

Յովհաննէս Մէրաբիկեանց։

Դեկտ. ամսոյ հանելուկն է Հրդեհ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ